Մշակույթը յուրաքանչյուր ժողովրդի ինքնության վկայականն է...

Ցանկացած ծնունդ շնորհավորվում է, տվյալ դեպքում ԵՊԿ «Երաժիշտ» ամսաթերթի ծնունդը ի սրտե շնորհավորում եմ, ինձ համար շատ հոգեհարազատ է կոնսերվատորիան և՛ իր ուսանողներով, և՛ դեկավարներով: Նախկին ռեկտոր Արմեն Սմբատյանը, ինչպես և ներկա ռեկտորը՝ Սերգեյ Սարաջյանն իմ ընկերներն են, մտերիմներ ենք, սատարում ենք միմյանց, որքան կարող ենք: Ուրախ եմ Ձեր բուհական թերթի լույսընծայման առթիվ, ցանկանում եմ անկոտրում կամք, եռանդ, հարատևություն:

Բարի երթ «Երաժիշտ» ամսաթերթին...

Իմ կարծիքով մշակույթը, հատկապես գեղանկարչությունը, երաժշտությունը յուրաքանչյուր ժողովրդի, հատկապես փոքրաթիվ ժողովուրդների ինքնության վկայականն է: Գեղանկարչության մեջ ես չեմ փնտրում ազգային բնորոշ հատկանիշներ, օրինակ՝ գորգ, հնաոճ կահկարասի կամ անպայման նմանություն լինի հայկական մանրանկարչությանը: Եթե որևէ գործ արվում է մասնագիտորեն, դա կարելի է համարել ազգի հարստությունը: Ես ստեղծագործելուն նայում եմ իրատեսորեն: Ինձ համար նկարչությունն առաջին հերթին թուղթ է, մատիտ, կտավ, ներկ: Չեմ կարող ապրել առանց ստեղծագործելու, դա իմ հոգու պահանջն է, որից խուսափել չեմ կարող: Ճիշտ է, այսօր շատ դժվար պայմաններում է աշխատում ստեղծագործողը, բայց աշխատողը համառում և գործադրում է իր բոլոր ուժերը: Փարիզը, Լոնդոնը, Նյու-Յորքը գեղանկարչության խոշոր կենտրոններ են, որոնք նկարիչների համար մնում են ձգտելու և հասնելու մշտամնա հանգրվաններ: Լինում եմ տարբեր երկրներում, ունեմ գործընկերներ, որոնց հետ ստեղծագործական օգտակար, ակտիվ շփումներ ունեմ, սակայն այսօր միմյանցից մեկուսացումը փոքր-ինչ հուզում է ինձ: Թեև ուրախալի փաստ է, որ յուրաքանչյուր արվեստագետ կարող է գտնել իր երկրպագուին:

Ես, որպես ստեղծագործող, մշտապես որոնումների մեջ եմ, շուտ եմ ձանձրանում: Արվեստաբաններն ինձ մեղադրում են, որ որոշակի ձեռագիր չեմ պահպանում, ինչը վկայում է ինքնատիպության բացակայության մասին: Սակայն ես կարծում եմ, որ ինքնատիպությունը դա չէ, այլ այն, ինչն արտահայտվում է ստեղծագործողի ազատության մեջ: Տվյալ դեպքում, իմ ընկալմամբ ազատությունը պայմանավորված է կյանքիս ընթացքով, այսինքն՝ հարափոփոխ է: Ամենօրյա աշխատանքն իմ հավատամքն է: Հյուսգոն ամեն օր աշխատում էր, մեկ դույլ ջուր լցնում վրան, թարմանում, ապա նորից աշխատում: Նա ամեն օր հանճարեղ գործեր չէր գրում, դա նրա աշխատանքի ընթացքն էր, նա չէր էլ մտածում դրա մասին, բայց արդյունքում ծնվում էին գլուխգործոցներ: Արվեստում կարևոր է կառուցողական գործոնը, շատ եմ զգացել ճարտարապետության, երաժշտության օրինաչափությունների կարևորությունն իմ ստեղծագործական կյանքում: Որևէ որոշակի ուղղության չեմ հարում, բայց կարելի է ասել, որ իմ սկզբունքն արվեստում ռեալիզմն է:



Այսօր շատ են կազմակերպվում ցուցահանդեսներ, հատկապես անհատական: Ինձ համար առանձնապես պատասխանատու խնդիր է. պատահական չէ, որ իմ վերջին անհատական ցուցահանդեսը եղել է 1999թ.: Ցուցահանդեսն առաջին հերթին պետք է բավարարի նկարչի ստեղծագործական պահանջները: Կան նաև կազմակերպչական, տեխնիկական դժվարություններ, բայց ես լավատես եմ և հավատում եմ վաղվա լավ օրվան:

Մանկուց մտքումս միայն նկարելու ձգտումն է եղել: Հայրս շատ էր ուզում, որ ես երաժիշտ դառնամ. 4 տարի սովորել եմ երաժշտական դպրոցում, բայց, երբ 12 տարեկան էի, մայրս մահացավ, և իմ երաժշտության պարապմունքներն ընդհատվեցին. դուրս եկա դպրոցից, որովհետև երաժշտական դպրոց հաճախելը մորս պահանջն էր: Իսկ նկարչություն ես սիրել, ընտրել եմ, մեր տանը հարուստ գրականություն կար և ես շատ էի կարդում: Երբ ընդունվեցի թատերական ինստիտուտ (այն ժամանակ առանձնացված չէր Գեղարվեստի ակադեմիան) ես արվեստի պատմությունն արդեն գիտեի: Այդ հարցում մեր ընտանիքը՝ հայրս, եղբայրս (որը նույնպես նկարիչ է), ինձ օգնել են, իսկ ուսանելու տարիներին եղել եմ ինքնուրույն և երբեք վտանգ չեմ զգացել, որ իմ աշխատանքը կնմանվի հորս՝ Էդվարդ Իսաբեկյանի կտավներին: Ստեղծագործական ճանապարհս հարթել եմ ինքս՝ հաճախ հորս կամքին հակառակ քայլեր եմ արել: Նա ինձ դասավանդել է, բայց մեր մեջ մշտապես եղել են ստեղծագործական տարակարծություններ: Ունեցել եմ անուղղակի ուսուցիչներ, որոնք մշտապես փոխվել են: Ինձ համար պարզ ու հստակ է մի բան. ուսանողը 2 տարի պետք է ստանա ակադեմիական կրթություն, ապա լինի ազատ՝ ունենա իր նախընտրած ուղղությունը, ժանրը, ոճը: Իսկական ստեղծագործողը բացի մասնագիտական գիտելիքներից, պետք է լինի բազմակողմանի զարգացած: Ստեղծագործող անհատի մեջ ամեն ինչ պետք է լինի ներդաշնակ, այլապես թերին մի օր գլուխ կբարձրացնի: Այն, ինչ որ մեր երիտասարդ տարիներին չկար, ուրախալի է, որ այսօր երիտասարդների համար կան անսպառ հնարավորություններ թե՛ տեղեկատվության, և թե՛ ստեղծագործական շփումների առումով:



Ա.Իսաբեկյան. Շեփորով նատյուրմորտ, 1982թ.

Շատ եմ սիրել իսպանացի նկարիչներին. իմ կուռքերն են Վելասկեսը, Գոյան: Առանձնապես սիրել եմ վաղ Վերածնության շրջանի արվեստը, որի հմայքով գերվել եմ,այն ինձ համար բարձունք է: Բավական է հիշել Զոտոյին, Ֆրանչեսկային և այլոց: Երբ ավելի հասուն տարիքում եղա Իտալիայում, այն ժամանակ հասկացա, որ չեմ սխալվել. այն ինչ որ սիրել եմ՝ մնացել է առ այսօր: Իտալիայում ես հասկացա, որ մարդը մրցել է բնության հետ և արդյունքը գերազանց է ստացվել: Բնությունը հրաշք է, և մարդու ստեղծածը չի խանգարել, չի հակադրվել, այլ լրացրել է բնությանը:

Շուրջ 12 տարի է ինչ վարում եմ Գեղարվեստի ակադեմիայի ռեկտորի պաշտոնը և ջանում եմ հնարավորինս օգնելու մեր ուսանողությանը, լուծելու, թեթևացնելու առաջացած խնդիրները:

2006թ., մեկ տարի ուշացումով, համեստ ձևով նշելու ենք ինստիտուտի հիմնադրման 60-ամյակը. կլինի ցուցահանդես, տեղի կունենա մեր թանգարանի բացումը, արվեստաբանները գիտաժողով կկազմակերպեն: Գեղարվեստի ակադեմիան այժմ ունի ցուցասրահ, որը շատ կարևոր գործոն է ուսանողի համար, ճիշտ է փոքր է, բայց հարմարավետ և առայժմ գոհացնում է մեր ուսանողությանը: Գեղարվեստի ակադեմիայում դասավանդում են բարձր մակարդակի մասնագետներ, որոնք պատրաստում են ապագա պրոֆեսիոնալ կադրեր: Մեր հաստատությունն անուշադրության հետևանքով միշտ տուժել է, այսինքն՝ շինարարական աշխատանքներ կատարելու համար հովանավորող չենք ունեցել, սակայն հուրախություն մեզ, այսօր ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հատուկ ուշադրության է արժանացրել Գեղարվեստի ակադեմիային և կատարված շինարարական աշխատանքների համար շատ շնորհակալ ենք նրանից:

Ակադեմիայում սովորում են ուսանողներ տարբեր երկրներից. վերջերս մեծ թիվ են կազմում հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունից եկածները. ինչը բնական ենք համարում և խթան, որ մեր երկրների կապերն էլ ավելի ընդլայնվեն:

Բնություն ... բնությունը հրաշալի է, ոչ մի վայրկյան նույնը չէ. հիմա ձմեռ է և տեսեք, թե որքան գեղեցիկ է ու կախարդական: Բնության առեղծվածային գեղեցկությունը գերազանցում է ամեն ինչ: Ես հիմա ավելի մոտ եմ բնությանը. Աշտարակում այգի ունեմ, որը շատ եմ սիրում, մեծ հաճույքով խնամում եմ և իմ կապը հողի հետ ավելի իրական ու ամուր է: Ափսոս, ծով չունենք, ես միշտ մտածել եմ. Հայաստանը եթե ծով ունենար, ապա կյանքս ավելի կերկարեր...

Գրի առավ երաժշտագետ
ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ